

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԸՑ ԵԿԵՂԵՑԻ

Церк. ВѢСТНИКЪ-ի 37 համարում կարգում ենք Մոսկվայի կրօնուսոյցների այս ասրուայ համաժողովին, որը տեղի ունեցաւ քննութիւններից յետոյ, ուշադրութեան առնուեց, որ ուսանողներէ, մանաւանդ քարձր դասարաններէ մէջ մեծ կարիք կայ եկեղեցական — պատմական և ապօլոգէալքական (պաշտպանողական) գիտութիւնների: Վերոյիշեալ և մանկավարժական գիտութիւններից տեղեկութիւններ ունենալու կարիք ունի և հասարակութիւնը, որը մեծ ազդեցութիւն ունի երկասարդ սերնդի վրայ: Այս պատճառով էլ լճիւ կայացաւ ներկայ աշնան սկզբներից կազմակերպել այդ նպատակաւ մի շարք դասախօսութիւններ կարգալու գործը: Սրճակուրդներէ ընթացքում դասախօսութիւններ պատրաստեցին Տրիփոն Եպիսկոպոսը և Եօթ աւագ քահանաներ, որոնք իբրև նիւթ ընարել են շատ հետաքրքիր թեմաներ:

— Մինչդեռ ռուս կրօնուսոյցները պաշտպանողական գիտութիւնների կարօտութեան մասին են մտածում և հոգում, մինչդեռ սոխորական դասերից դուրս նրանք առանձին դասախօսութիւնների միջոցաւ ուզում են ազդել նոյն իսկ հասարակութեան վրայ, ինչպիսիք են գրագուած հայ մանուկների կրօնուսոյցները. արդեօք զէթ բարեխիղճ կերպով յաճախում են նրանք իրենց դասերին, փոքր ի շատէ կանոնաւոր և բաւարար կերպով կատարում են իրենց պարտաւորութիւնները... հետաքրքիր և ծանր հարցեր, որոնց պատասխանը միշտ բացատրական է լսուել տարաբաղդարար:

Տեղական թեմական իշխանութեան կարգադրութեամբ Պողօլի Թեմական Տեղեկաբերի մէջ տպուած է Կիւելի, Վօլինի և Պողօլի դէներալ նահանգապետի գրութիւնը գիւղական տընտեսութիւնը քարձրացնելու համար տեղական հողւորականուամանակցութեան նշանակութեան մասին: Այդ գրութեան մէջ ընդգծուած են այն ընդհանուր միջոցները, որոնց՝ մինչև որոշ ծրագրի աւելի մանրամասն մշակութիւնը, հողւորականութիւնը կարող է հետևել գիւղական անտեսութեան վրայ նպատաւոր ազդեցութիւն ունենալու նպատակաւ:

Առաջին տեղը պէտք է տալ իւրաքանչիւր ծխի համար հանրամատչելի՝ երկրագործական զանազան ձիւղերին վերաբերեալ գրքերի դրադարանների բացման գործին, որը յարմարեցրած պէտք է լինի դիւղական կարիքներին: Ես իմ հողմից առանձին միջոցների կրճեռնարկեմ, ասում է դեներալ նահանգապետը, որպէս զի յիշեալ դրադարաններին տրուին այն զըրքերը, որոնք կարևոր են հէնց սիլըից: Ձեռքի տակ այդպիսի գրադարան ունենալով, քահանան կարող է հրաւիրել իւր ծխականների ուշադրութիւնը այս կամ այն գրքի վրայ, հետաքրքրել նրանց և ապա տալ կարդալու: Մի ուրիշ ժամանակ էլ երևի կաշխատի խօսակցել կարգացածի մասին: Յանկալի է, որ նոյնպիսի գրադարաններ հաստատուին նաև եկեղեցական ծխական դպրոցներին կից: Քահանաները կարող են նախաձեռնել դպրոցներին կից այգիներ անկելու, անկարաններ, բանջարանոցներ և մեղուանոցներ ունենալու գործը և այդ բոլորը ահագին օգուտ կը բերի դիւղատնտեսական գիտութիւններ տարածելու գործին: Ծխական քահանաները, մանաւանդ եկեղեցական ծխական դպրոցների վերատեսուչները, մեծ յարմարութիւններ ունին ամենայն տարի գարնանը տնկաբուծութեան տօն սարքելու, մասնաւոր անձանց ագարակներն այցելել երկրագործական այս կամ այն ձիւղը դիտելու համար և այլն: Հարաւ արևմտեան Ռուսաստանի քահանաները մեծաւ մասամբ իրենք են երկրագործութեամբ պարապում և այդ պատճառով էլ բազմակողմանի և կանոնաւոր տնտեսութիւն մտցնելով, կարող են ցանկալի օրինակ լինել դիւղական աղագընակութեան համար:

— Ահա գեղեցիկ գործ և ծրագիր նաև հայ հոգևորականութեան համար, որի մեծամասնութիւնը դիւղերում իսկ որ պարապում է դիւղատնտեսութեամբ: Միջոցներ գտնել հարկաւոր դիւղատնտեսական գրքեր ձեռք բերելու և լաւացնելով սեփական տնտեսութիւնը, գեղեցիկ օրինակ տալ ծխականներին, իսկապէս շատ և շատ օգտակար գործ է, որի վրայ հրաւիրում ենք մեր ընթերցող քահանաների ուշադրութիւնը:

Տամբովի կոնսիստորիան քննելով այդ նահանգի քարոզչութեան կացութիւնը, գտել է, որ թեմում բաւականին եռանդոտ և ընդունակ քարոզիչներ կան, բայց և քիչ չեն այնպիսիք, որոնց քարոզն իւր բովանդակութեամբ և արատանելու ձևով համապատասխան չէ քարոզի պահանջներին:

Նրանք չոր են, սառն, անկենդան, վերացական և ունկընդիւններին անհասկանալի: Սրբոց կեանքի նկարագրերը, աղ-

դայնն պատմութիւնը, եկեղեցական ծէսերը, երգեցողութիւնն ու աղօթքները հազուադիւտ են քարոզի նիւթ դառնում, թէև իրենց մէջ բովանդակում են խրատական նիւթեր: Մի քանի քարոզիչների լեզուն անմշակ է. քարոզների ժամանակ յաճախ դործ են ածում օտար բառեր կամ սովորական—աամիական ձևեր, որոնք եկեղեցական ամբիոնին անպատշաճ են. (օրինակ— կեանքի ժխորը, վաստակը, շռայլակեցութիւնը),* քարոզներից շատերն էլ կեանքից կտրուած՝ խորթ բաներ են:

Եկեղեցական համբաւարները նկատում է, որ ուրիշ թեմերումն էլ նոյն բաները նկատելի են և շատ անգամ պաշտօնապէս յայտարարուելով, դայրոյթ և դժգոհութիւն են առաջ բերել: Զարմանալի է թւում այդ դրութիւնը մանաւանդ ներկայումս, երբ մի կողմից պատերազմը, միւս կողմից անբերրութիւնը, խօլերան և այլն, պէտք է նիւթ դառնան քարոզիչ հովուին և նա հովուական որոշ ցուցումներ պէտք է տայ իւր հօտին:

— Արդեօք նորից կրկնենք, թէ ինչ մեծ նշանակութիւն ունի քարոզը և հայ ժողովրդի համար. որքան ծարաւի է նա ճշմարտութեան. մանաւանդ երբ անդրազէտ է, և զուրկ զբքից ու դպրոցից: Մեր քարոզիչների թիւր աւելի քան շնչին է: Աւնինք թեմեր, որտեղ հազիւ երկու երեք մարդ գանուի քարոզչի խիական ընդունակութեամբ և պատրաստութեամբ: Յանկալի է, որ մեր առաջնորդներն ու փոխանորդները լուրջ ուշադրութիւն դարձնեն քարոզիչների թիւն աւելացնելու և ընդունակ մարդկանց դործի հրաւիրեն: Մի բան որ պէտք է ամենից առաջ ի նկատի ունենան մեր քարոզիչները. այդ Աւետարանն է իւր բարոյական և մարդասիրական իրէալներով և ցանկալի է, որ մեր քարոզիչները սովորեն այդ մարուր աղբիւրից օգտուել իրենց քարոզների համար և այն ոչ վերացահանօրէն, այլ կապելով մեր ներկայ անսկզբունք և վայրենի (ինստինքաներով) ընազգներով լի կեանքի հետ:

* «Новые пути» թերթում պ. Ռօզանովը խօսում է ռուսաց եպիսկոպոսների պարտադիր կուսակրօնութեան մասին:

Պօզոս առաքեալի թղթոց մէջ պարզապէս ասուած է, որ եպիսկոպոսը պարտաւոր է լինել մաքուր, միոյ կնոջ այր. Ռօզանովը շատ հիմնաւոր կերպով արտայայտում է իւր զայրոյթը: Եպիսկոպոսը պէտք է պսակուած լինի, այլապէս նա ինչպէս կարող է ոստեր արձակել. եպիսկոպոսները մինչև օրե-

գերական 7-դ ժողովը իրաւունք ունէին ամուսնանալու և այդ ոչ որի կողմից յանդիմանութեան և դիտողութեան չէր հանդիպում: «Նպիսկոպոսը չը պէտք է պսակուի, և եթէ նրանցից մինը առանց կոչումը վրայից վերցնելու պսակուի, նա համարեա Սիբիր արտոր է դատապարտոււմ:

Պ. պ. Բունկելի և Լեպորսկին, որոնք կրօնական ինկլիսիայական նիստերի ժամանակ պնդում էին, որ մեզ մօտ ճշմարտութիւններն անփոփոխ են մնացել և մենք միայն հատիկներն ցորեն ենք բուսուցանում, որի ժամանակ թէ ցորենից և թէ հատիկներից ճաշակում էին ամենքը միշտ և հանապազ և դա մեր անդրդուելի ճշմարտութեան բնորոշ գծերից մէկն է, գուցէ նրանք կցրուեն իմ այս մոլորութիւնս:

Ռօզանովի համար այդ հարցը ոչ միայն տեսական, այլ և գործնական կեանքի խնդիրն է հանդիսանում: Նա ասում է հետևեալը.—

Չէ՞ որ անգլիացու ընտանիքի իդէալական տիպարը նրանով է բացատրոււմ, որ նրանց եպիսկոպոսները պսակուած են և աշխարհականները միշտ գործնական օրինակ են վերցնում այդ միշտ աչքի առաջ եղող, և շօշափելի ընտանիքի բարի և առաքինի կողմերից: Եւ այդ օրինակներն աւելի զօրուոր են, քան բանաւոր և հեռուից արտատանած քարոզը:

Պետրոս առաքեալը պսակուած էր:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅՑԻ

Իտալիայում գոյութիւն ունեցող կաթոլիքական կազմակերպութիւնը (Azione Cattolica) որից Լևոն XIII պապը մեծ օգուտներ էր սպասում եկեղեցու և պապական աթոռի համար, վերջին տարիներս սկսեց հետևել իւր հովանաւորի գծած շաւղի հակառակ ուղղութեան: Չքաւականանալով նրա գծած ճրագրով, գործիչներից շատերը ցանկացան ընթանալ այն ուղղութեամբ, որով առաջնորդոււմ է բանուորական կուսակցութիւնն այլ երկիրներում, և աւելի աղգային կեանքի մասին էին հոգ տանում, քան պապական աթոռի օգուտների մասին: Ղեկավարների մէջ ահա այդ պատճառով առաջ եկած տարաձայնութիւնները հարկադրեցին Պիոս X պապին՝ գահ բարձրանալուն պէս առանձին շրջաբերականով (Motu proprio) յեշեցնել նրանց քրիստոնէական ռամկավարութեան հիմնական սկզբունքները, ինչպէս որ այդ հասկանում էր Լևոն XIII պապը: Բայց որով-